ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ՝ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Էջմիածին» ամսագիրը 1997-1998 թվականների ընթացքում հրատարակեց Բարեշնորհ Նշան սարկավագ Հովհաննիսյանի (այժմ՝ Խորեն աբեղա) "Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի" Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանած ավարտաճառը (ղեկավար՝ Վարդան Դևրիկյան), որտեղ, թյուրիմացաբար, առանց հեղինակի անունը նշելու, թվարկված են մի շարք նյութեր, որոնք իմ գրչին են պատկանում: Դրանք են.

1. Հայ Եկեղեցու տոնելի սրբերի համառոտ կենսագրությունները, 1980 թ., համարներ Ա 38, Բ-Գ 34, Զ-Է 37, Ժ 14, ԺԱ 31:

2. Հայագիտական հրատարակություններ, 1982 թ., համարներ Է 58, Ը-Թ 74, Ժ 57, ԺԱ-ԺԲ 67, 1983 թ., համարներ Բ-Գ 82, Է 53, Ը 54, ԺԱ-ԺԲ 77:

3. Հայազգի սրբերի կենսագրության նոր ժողովածու, 1983 թ., համար Ը 5:

Բացի այդ, «Հեղինակների և անձնանունների ցանկ»-ում, չգիտես ինչու, «Վոլոդյա Աբրահամյան»-ը դարձել է «Վալենտինա Աբրահամյան»: Կարծում եմ, այնքան էլ բարդ չէր զանազանելը գրախոսի և գրախոսվող գրքի հեղինակի անունները:

"Մատենագիտություն"-ը օգտագործելիս խնդրում եմ նկատի ունենալ այս պարագան, իսկ նոր "Մատենագիտություն" կազմելիս սրբագրել անճշտությունները:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ